

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/1-4**

ք. Երևան

«07» 05 2018թ.

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի (Արարատ-7, Արարատ-8, Արարատ-9) և ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիք-1», «Սյունիք-2», «Սյունիք-3», «Սյունիք-5», «Սյունիք-8» միկրոռեզիդենսալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:



2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերը պատվիրատուին ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 160 630 000 (մեկ հարյուր վաթսուներկու վեց հարյուր երեսուց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից՝

ՀՀ Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի (Արարատ-7, Արարատ-8, Արարատ-9) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ – 43 500 000 (քառասուներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիք-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ – 45 600 000 (քառասուներեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիք-2» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ – 18 600 000 (տասնութ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիք-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ – 22 450 000 (քսաներկու միլիոն չորս հարյուր հիսուց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ – 20 760 000 (քսան միլիոն յոթ հարյուր վաթսուց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

**ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիք-8» միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ - 9 720 000 (ինը միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

#### **5. Կողմերի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Փաստաթղթերի կիրառման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝ շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, քրիեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

#### **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

#### 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

<<<< կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>>  
պետական կառավարչական հիմնարկ  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,  
կառավարական տուն 3  
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի  
գործառնական վարչություն  
Հ/Հ 900011019115, 900011019123  
ՀՎՀՀ 02565827

##### ԿԱՏԱՐՈՂ՝


<<Հայնախագիծ>> ԲԲԸ  
ք. Երևան, Չարենցի 1,  
<<Արդշինքանկ>> ՓԲԸ  
Հ/Հ 247010003850  
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

Աշխատակազմի ղեկավար՝



Ա. Մկրտչյան



Գ. Ազիզյան

*[Handwritten signatures and marks at the bottom of the page]*

**ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

**Չափաբաժին 3**

**«Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի (Արարատ-7, Արարատ-8, Արարատ-9) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների**

«Արարատ»

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական և բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/«Արարատ»	ընդհանուր գինը/«Արարատ»	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
3	71241200/1		«Արարատ»	43 500 000	43 500 000	1	ք. Երևան, Չարենցի 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.10.2018թ. ներառյալ:
<b>Տեխնիկական բնութագիր</b>								
<b>Օբյեկտի անվանումը</b>			<b>Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը</b>					
<p>«Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի փաստաթղթեր.</p> <p>Արարատ-7</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ք. Արարատ,</li> <li>2. Ավշար,</li> <li>3. Այգավան,</li> <li>4. Ոսկետափ,</li> <li>5. գ. Արարատ,</li> <li>6. Արմաշ,</li> <li>7. Նոյակերտ,</li> <li>8. Սուրենավան,</li> <li>9. Երասխ,</li> <li>10. Եղեգնավան, համայնքներ</li> </ol> <p>Արարատ-8</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ք. Վեդի,</li> <li>2. Արալեզ,</li> <li>3. Գինեվետ,</li> <li>4. Գոռավան,</li> <li>5. Դաշտաքար,</li> </ol>			<p>«Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի փաստաթղթերը ներառում են հետևյալ 3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը.</p> <p><b>Արարատ-7՝</b> ք. Արարատ, Ավշար, Այգավան, Ոսկետափ, գ.Արարատ, Արմաշ, Նոյակերտ, Սուրենավան, Երասխ, Եղեգնավան, (10) համայնքների տարածքները ներառող տարածքային հատակագծման նախագիծ և գոտևորման նախագծեր,</p> <p><b>Արարատ-8՝</b> ք. Վեդի, Արալեզ, Գինեվետ, Գոռավան, Դաշտաքար, Լուսառատ, Նոր Ուլի, Նոր Կյանք, Սիսավան, Վանաշեն, Տափերական, Փոքր Վեդի (12) համայնքների տարածքները ներառող տարածքային հատակագծման նախագիծ և գոտևորման նախագծեր,</p> <p><b>Արարատ-9՝</b> Պարույր Սևակ, Զանգակատուն, Լանջառ, Լուսաշող, Վարդաշատ, Ուրցաձոր, Շաղափ, Լանջանիստ, Ուրցալանջ (9) համայնքների տարածքները ներառող տարածքային հատակագծման նախագիծ և գոտևորման նախագծեր:</p> <p>Նախագծերի մշակման հիմնական նպատակն է՝ ներառված համայնքներում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված</p>					

<p>6. Լուսառատ, 7. Նոր Ուղի, 8. Նոր Կյանք, 9. Սիսավան, 10. Վանաշեն, 11. Տափերական, 12. Փոքր Վեդի համայնքներ</p> <p>Արարատ-9</p> <p>1. Պարույր Սևակ, 2. Զանգակատուն, 3. Լանջառ, 4. Լուսաշող, 5. Վարդաշատ, 6. Ուրցածոր, 7. Շաղափ, 8. Լանջանիստ, 9. Ուրցալանջ համայնքներ</p>	<p>միջոցառումների մշակումը:</p> <p>Տարածքային հատակագծման մասով նախագծերը պետք է առաջարկեն տարածքների հատակագծային կազմակերպման և սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ, ուղղված՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրությանը՝ ներդրումների համար նպաստավոր ոլորտները և գոտիները,</li> <li>- արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը,</li> <li>- ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը,</li> <li>- շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,</li> <li>- ինժեներատրանսպորտային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացմանը,</li> <li>- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,</li> <li>- տարածքի ինժեներական նախապատրաստմանը,</li> <li>- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը:</li> </ul> <p>Գոտևորման մասով պետք է կանոնակարգվեն՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- բնակավայրերի և դրանց սահմաններից դուրս գտնվող կառուցապատման ենթակա հողերի նպատակային և գործառնական նշանակությունները, հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները,</li> <li>- կառուցապատման հերթականությունը,</li> <li>- հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը,</li> <li>- առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման չափորոշիչները:</li> </ul>
<p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագիրը,</li> <li>- ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1717-Ն - Ն որոշումը,</li> </ul> <p>Փաստաթուղթը մշակվելու է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի» (փոփոխված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N1645-Ն որոշմամբ),</li> <li>- ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի»,</li> <li>- ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:</li> </ul>
<p>Նախագծման փուլերը</p>	<p><b>I փուլ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ելակետային նյութերի, այդ թվում՝ ինժեներաերկրաբանական, սեյսմաշրջանացման քարտեզների հավաքագրում (մշակում), տվյալների վերլուծություն,</li> <li>• հենակետային հատակագծի մշակում դիսկերի և սահմանափակումների նշումով,</li> <li>• տարածքային հատակագծման և տարածքների կազմակերպման հիմնական</li> </ul>

	<p>ուղղությունների առաջադրում, միջամտության տարածքների որոշում</p> <ul style="list-style-type: none"> <li>• համառոտ բացատրագիր:</li> <li>• գործառնական գոտևորման էսքիզային տարբերակի մշակում,</li> </ul> <p>Հենակետային հատակագծի և տարածքների կազմակերպման հիմնական ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների միջանկյալ համաձայնեցում պատվիրատուի հետ (<u>մինչև 2018 թվականի հունիսի 12-ը</u>):</p> <ul style="list-style-type: none"> <li>• շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության գործընթացին և հանրային քննարկումներին մասնակցություն (ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքի պատճենը ներկայացվում է պատվիրատուին),</li> <li>• նախագծային փաստաթղթերի մշակում,</li> <li>• նախագծային փաստաթղթերը ներկայացվում են պատվիրատուին տեխնիկական բնութագրին և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ (փոփոխված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N1645-Ն որոշմամբ) պահանջվող կազմին և բովանդակությանը համապատասխան, տեխնիկական բնութագրում նշված ձևաչափով (առանց փորձաքննությունների եզրակացությունների):</li> </ul> <p><b><u>I փուլի վերջնաժամկետ՝ 2018 թվականի հուլիսի 30:</u></b></p> <p><b>II փուլ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Պատվիրատուի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա նախագծային փաստաթղթերի լրամշակում և ներկայացում պատվիրատուին՝ միջանկյալ համաձայնեցման՝ <u>մինչև 2018 թվականի սեպտեմբերի 10-ը</u>:</li> </ul> <p>Պատվիրատուի կողմից նախագծերը ուսումնասիրվում և ուղարկվում են շահագրգիռ մարմիններ՝ կարծիքների <u>մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը</u>.</p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկումների և համաձայնեցումների արդյունքում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա նախագծային փաստաթղթերի վերջնամշակում,</li> <li>• նախագծային փաստաթղթերի ներկայացում քաղաքաշինական համալիր փորձաքննության, պատվիրատուին ներկայացվում են պայմանագրերի պատճենները:</li> <li>• ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների եզրակացությունների ստացում:</li> </ul> <p>Վերջնական փուլի աշխատանքները պատվիրատուին են հանձնվում.</p> <p>1-ական օրինակ թղթային և 15-ական օրինակ լազերային կրիչների վրա՝ կցելով ինժեներաերկրաբանական նյութերի, քաղաքաշինական և շրջակա միջավայրի փորձաքննությունների եզրակացությունները:</p> <p><b><u>II փուլի վերջնաժամկետ՝ 2018 թվականի հոկտեմբերի 31-ը:</u></b></p>
<p>Նախագծի կազմը</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Նախագծերը մշակվում են ՀՀ կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ (փոփոխված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N1645-Ն որոշմամբ) հաստատված կարգի N2 հավելվածում նշված կազմով և բովանդակությամբ,</li> <li>• հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները ներկայացվում են յուրաքանչյուր համայնքի (բնակավայրի) համար առանձին, նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացվում են ինչպես առանձին համայնքների (բնակավայրերի) մասով, այնպես էլ միկրոռեգիոնի համար,</li> <li>• Տեքստային մասերը ներկայացվում են A4 ֆորմատով, Armenian Unicode տառատեսակով, տեքստի տառաչափերը՝ h=12 կամ h=10, աղյուսակները</li> </ul>

	<p>համապատասխանաբար՝ h=10, h=8, տողերի միջև հեռավորությունը 1.0 կամ 1.15: Բացատրագրի առավելագույն ծավալը՝ 110 էջ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Տարածքային հատակագծման գծագրերը մշակվում են 1:25000 կամ 1:10000 մասշտաբով, հողերի նպատակային նշանակության փոփոխությունները՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբով, գոտևորման նախագծերը՝ 1:5000 կամ 1:2000 մասշտաբով: Այլ մասշտաբի ընտրությունը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:</li> <li>• Նախագծերը համաձայնեցման են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ տեքստը՝ Word, գծագրերը՝ AutoCAD (կամ ArchiCAD) և PDF ծրագրերով:</li> <li>• Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստացած նախագծերը պատվիրատուին են ներկայացվում հաստատման՝ մեկական էլեկտրոնային և մեկական թղթային տարբերակներով.</li> <li>• Հաստատված նախագծերը հանձնվում են պատվիրատուին էլեկտրոնային կրիչներով՝ 15-ական օրինակ, թղթային օրինակներ՝ առնվազն հենակետային, հիմնական և գոտևորման գծագրերը մարզպետարանի և յուրաքանչյուր համայնքի հաշվարկով:</li> </ul>
<p>Այլ պահանջներ</p>	<p>I փուլի վերջում կամ II փուլի սկզբնական ժամանակահատվածում նախագծային փաստաթղթերը կապալառու կազմակերպության կողմից ներկայացվում են ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը մեկնարկելու համար:</p> <p>II փուլի ընթացքում պատվիրատուի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված նախագծերը պատվիրատուի նախաձեռնությամբ, նախագծերի հեղինակների ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում, որից հետո պատվիրատուի կողմից ներկայացվում են շահագրգիռ մարմինների համաձայնեցմանը էլեկտրոնային եղանակով:</p> <p>Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերի հավաքագրումը, ինչպես նաև նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձագիտական եզրակացությունների ստացումն իրականացնելու է նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուն:</p> <p>Պատվիրատուն տրամադրում է համայնքների զարգացման ծրագրերը, 2018 թվականի դրությամբ հողային հաշվեկշիռները, կադաստրային քարտեզները՝ համապատասխան թեմատիկ շերտերով (հողօգտագործումները, հողատեսքերի սահմանները, ծածկագրերը, հողատեսքերն ըստ սեփականության ձևերի, փողոցային ցանցը, շենքերը շինություններն ըստ հարկայնության, ինժեներական ենթակառուցվածքների ուղեգծերը), տեղագրական հանույթները, համայնքներին վերաբերող այլ տվյալներ:</p> <p>Կապալառուն մասնակցում է հանրային քննարկումներին և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին, պատվիրատուի առաջարկությամբ նախագծերի համապատասխան փուլի աշխատանքը ներկայացնում է միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:</p> <p>Ավարտված նախագծերը ներկայացվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստի քննարկմանը, նախագծերի վերաբերյալ կազմվում են եզրակացություններ: Նախագծերը հաստատվում են պատվիրատուի կողմից: Սույն բնութագրին համապատասխան կազմված նախագծային առաջադրանքները կտրամադրվեն մրցույթի արդյունքներով ընտրված նախագծային կապալառու կազմակերպությանը:</p>

**Չափաբաժին 4**

**«Սյունիքի մարզի «Սյունիք-1» միկրոռեզիոնայ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների**

«Ղ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/«Ղ դրամ	ընդհանուր գինը/«Ղ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
							4	71241200/2

**Տեխնիկական բնութագիր**

Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
<p>Սյունիք-1</p> <p>/Կապան համայնք/</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ք. Կապան,</li> <li>2. Ագարակ,</li> <li>3. Աղվանի,</li> <li>4. Աճանան,</li> <li>5. Անտառաշատ,</li> <li>6. Առաջածոր,</li> <li>7. Արծվանիկ,</li> <li>8. Սյունիք,</li> <li>9. Դիցմայրի,</li> <li>10. Խործոր,</li> <li>11. Սգնակ,</li> <li>12. Բարգուշատ,</li> <li>13. Գեղանուշ,</li> <li>14. Գոմարան,</li> <li>15. Դավիթ Բեկ,</li> <li>16. Եղեգ,</li> <li>17. Եղվարդ,</li> <li>18. Խդրանց,</li> <li>19. Ծավ,</li> <li>20. Շիշկերտ,</li> <li>21. Կաղնուտ,</li> <li>22. Ձորաստան,</li> <li>23. Ճակատեն,</li> <li>24. Ներքին Խոտանան,</li> <li>25. Ներքին Հանդ,</li> <li>26. Նորաշենիկ,</li> <li>27. Շիկահող,</li> </ol>	<p>38 բնակավայրերի տարածքները ներառող տարածքային հատակագծման նախագիծ և գոտևորման նախագծեր:</p> <p>Նախագծի մշակման հիմնական նպատակն է՝ ներառված համայնքներում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը:</p> <p>Տարածքային հատակագծման մասով նախագիծը պետք է առաջարկի տարածքների հատակագծային կազմակերպման և սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ, ուղղված՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրությանը՝ ներդրումների համար նպաստավոր ոլորտները և գոտիները,</li> <li>- արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը,</li> <li>- ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը,</li> <li>- շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,</li> <li>- ինժեներատրանսպորտային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացմանը,</li> <li>- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,</li> <li>- տարածքի ինժեներական նախապատրաստմանը,</li> <li>- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը:</li> </ul> <p>Գոտևորման մասով պետք է կանոնակարգվեն՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- բնակավայրերի և դրանց սահմաններից դուրս գտնվող կառուցապատման ենթակա հողերի նպատակային և գործառնական նշանակությունները, հողերի</li> </ul>

<p>28. Շրվենանց, 29. Չափնի, 30. Սրաշեն, 31. Սևաքար, 32. Վանեք, 33. Վարդավանք, 34. Վերին Խոտանան, 35. Տանձավեր, 36. Տավրուս, 37. Ուժանիս, 38. Օխտար</p> <p>բնակավայրեր</p>	<p>օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները,</p> <ul style="list-style-type: none"> <li>- կառուցապատման հերթականությունը,</li> <li>- հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը,</li> <li>- առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման չափորոշիչները:</li> </ul>
<p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագիրը,</li> <li>- ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1717-Ն - Ն որոշումը,</li> </ul> <p>Փաստաթուղթը մշակվելու է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի» (փոփոխված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N1645-Ն որոշմամբ),</li> <li>- ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի»,</li> <li>- ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:</li> </ul>
<p>Նախագծման փուլերը</p>	<p><b>I փուլ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ելակետային նյութերի, այդ թվում՝ ինժեներաերկրաբանական, սեյսմաշրջանացման քարտեզների հավաքագրում (մշակում), տվյալների վերլուծություն,</li> <li>• հենակետային հատակագծի մշակում ոչսկերի և սահմանափակումների նշումով,</li> <li>• տարածքային հատակագծման և տարածքների կազմակերպման հիմնական ուղղությունների առաջադրում, միջամտության տարածքների որոշում</li> <li>• համառոտ բացատրագիր:</li> <li>• գործառնական գոտևորման էսքիզային տարբերակի մշակում,</li> </ul> <p>Հենակետային հատակագծի և տարածքների կազմակերպման հիմնական ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների միջանկյալ համաձայնեցում պատվիրատուի հետ (մինչև 2018 թվականի հունիսի 12-ը):</p> <ul style="list-style-type: none"> <li>• շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության գործընթացին և հանրային քննարկումներին մասնակցություն (ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքի պատճենը ներկայացվում է պատվիրատուին),</li> <li>• նախագծային փաստաթղթերի մշակում,</li> <li>• նախագծային փաստաթղթերը ներկայացվում են պատվիրատուին տեխնիկական բնութագրին և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ (փոփոխված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N1645-Ն որոշմամբ) պահանջվող կազմին և բովանդակությանը համապատասխան,</li> </ul>

	<p>տեխնիկական բնութագրում նշված ձևաչափով (առանց փորձաքննությունների եզրակացությունների):</p> <p><b>I փուլի վերջնաժամկետ՝ 2018 թվականի հուլիսի 30:</b></p> <p><b>II փուլ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Պատվիրատուի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա նախագծային փաստաթղթերի լրամշակում և ներկայացում պատվիրատուին՝ միջանկյալ համաձայնեցման՝ <u>մինչև 2018 թվականի սեպտեմբերի 10-ը:</u></li> </ul> <p>Պատվիրատուի կողմից նախագիծն ուսումնասիրվում և ուղարկվում է շահագրգիռ մարմիններ՝ կարծիքների մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը,</p> <ul style="list-style-type: none"> <li>քննարկումների և համաձայնեցումների արդյունքում ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա նախագծային փաստաթղթերի վերջնամշակում,</li> <li>նախագծային փաստաթղթերի ներկայացում քաղաքաշինական համալիր փորձաքննության, պատվիրատուին ներկայացվում է պայմանագրի պատճենը:</li> <li>ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների եզրակացությունների ստացում:</li> </ul> <p>Վերջնական փուլի աշխատանքները պատվիրատուին են հանձնվում.</p> <p>1 օրինակ թղթային և 15 օրինակ լազերային կրիչների վրա՝ կցելով ինժեներատեխնիկական նյութերի, քաղաքաշինական և շրջակա միջավայրի փորձաքննությունների եզրակացությունները:</p> <p><b>II փուլի վերջնաժամկետ՝ 2018 թվականի հոկտեմբերի 31-ը:</b></p>
<p>Նախագծի կազմը</p>	<ul style="list-style-type: none"> <li>Նախագիծը մշակվում է ՀՀ կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ (փոփոխված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N1645-Ն որոշմամբ) հաստատված կարգի N2 հավելվածում նշված կազմով և բովանդակությամբ,</li> <li>հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները ներկայացվում են յուրաքանչյուր համայնքի (քնակավայրի) համար առանձին, նախագծի տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացվում են ինչպես առանձին համայնքների (քնակավայրերի) մասով, այնպես էլ միկրոոեգիոնի համար,</li> <li>Տեքստային մասը ներկայացվում է A4 ֆորմատով, Armenian Unicode տառատեսակով, տեքստի տառաչափերը՝ h=12 կամ h=10, աղյուսակները համապատասխանաբար՝ h=10, h=8, տողերի միջև հեռավորությունը 1.0 կամ 1.15: Բացատրագրի առավելագույն ծավալը՝ 110 էջ:</li> <li>Տարածքային հատակագծման գծագրերը մշակվում են 1:25000 կամ 1:10000 մասշտաբով, հողերի նպատակային նշանակության փոփոխությունները՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբով, գոտևորման նախագծերը՝ 1:5000 կամ 1:2000 մասշտաբով: Այլ մասշտաբի ընտրությունը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:</li> <li>Նախագիծը համաձայնեցման է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ տեքստը՝ Word, գծագրերը՝ AutoCAD (կամ ArchiCAD) և PDF ծրագրերով:</li> <li>Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստացած նախագիծը պատվիրատուին ներկայացվում է հաստատման՝ մեկ էլեկտրոնային և մեկ թղթային տարբերակներով,</li> <li>Հաստատված նախագիծը հանձնվում է պատվիրատուին էլեկտրոնային կրիչներով՝ 15 օրինակ, թղթային օրինակներ՝ առնվազն հենակետային, հիմնական և գոտևորման գծագրերը մարզպետարանի և յուրաքանչյուր համայնքի հաշվարկով:</li> </ul>

Այլ պահանջներ

I փուլի վերջում կամ II փուլի սկզբնական ժամանակահատվածում նախագծային փաստաթղթերը կապալառու կազմակերպության կողմից ներկայացվում են ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը մեկնարկելու համար:

II փուլի ընթացքում պատվիրատուի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված նախագիծը պատվիրատուի նախաձեռնությամբ, նախագծի հեղինակների ներկայացմամբ քննարկվում է միջգերատեսչական հանձնաժողովի նիստում, որից հետո պատվիրատուի կողմից ներկայացվում է շահագրգիռ մարմինների համաձայնեցմանը էլեկտրոնային եղանակով:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերի հավաքագրումը, ինչպես նաև նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձագիտական եզրակացությունների ստացումն իրականացնելու է նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուն:

Պատվիրատուն տրամադրում է համայնքների զարգացման ծրագրերը, 2018 թվականի դրությամբ հողային հաշվեկշիռները, կադաստրային քարտեզները՝ համապատասխան թեմատիկ շերտերով (հողօգտագործումները, հողատեսքերի սահմանները, ծածկագրերը, հողատեսքերն ըստ սեփականության ձևերի, փողոցային ցանցը, շենքերը շինություններն ըստ հարկայնության, ինժեներական ենթակառուցվածքների ուղեգծերը), տեղագրական հանույթները, համայնքներին վերաբերող այլ տվյալներ:

Կապալառուն մասնակցում է հանրային քննարկումներին և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին, պատվիրատուի առաջարկությամբ նախագծի համապատասխան փուլի աշխատանքը ներկայացնում է միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

Ավարտված նախագիծը ներկայացվում է միջգերատեսչական հանձնաժողովի նիստի քննարկմանը, նախագծի վերաբերյալ կազմվում է եզրակացություն: Նախագիծը հաստատվում է պատվիրատուի կողմից:

Սույն բնութագրին համապատասխան կազմված նախագծային առաջադրանքը կտրամադրվի մրցույթի արդյունքներով ընտրված նախագծային կապալառու կազմակերպությանը:

**Չափաբաժին 5**

